# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.11.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/299**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.10.2021թ. թիվ 26/26-1/17751-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.10.2021թ. թիվ 23/07-23/25579 գրության հիման վրա, 29.10.2021թ. թիվ 26/26-1/17751-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/299 ընթացակարգի շրջանակներում 04.11.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.10.2021թ. թիվ 23/07-23/25579 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված հ. ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 ծածկագրով գնման ընթացակարգին, որպես գնման արդյունքում ընտրված մասնակից Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի փետրվարի 25-ին կնքվել է հ. ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր /այսուհետ՝ նաև Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվել է ստանձնել սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե կատարողն՝ էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Տեղեկացնում եմ, որ 2021 թվականի հոկտեմբերի 13-ին «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներկայացվել է պայմանագիրը միակողմանի

լուծելու վերաբերյալ ծանուցում և Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծել է ընկերության հետ 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված հ. ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ՝ խնդրում եմ «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց:

Կից ներկայացվում են Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված հ. ԵՔ-ՀԾՁԲ-21/73-1 ծառայությունների մատուցման գնման պայմանագրի, նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցման, տուժանքի մասին 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված հ. ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1 համաձայնագրի, դրան կից վճարման հանձնարարագրի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/299 ընթացակարգի շրջանակներում 04.11.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/299 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/299 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 25.02.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 7-րդ կետի 7.16-րդ ենթակետի համաձայն՝ Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

3. Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի

դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 20.10.2021թ. թիվ 23/07-23/25579 գրությամբ:

4. Պատվիրատուի կողմից 25.10.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.10.2021թ. թիվ 26/26-1/17751-2021 գրությունը, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 20.10.2021թ. թիվ 23/07-23/25579 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 25.02.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/73-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 7-րդ կետի 7.16-րդ ենթակետի համաձայն՝ Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

***Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է <u>20.10.2021թ.</u> թիվ 23/07-23/25579 գրությամբ:***

***Պատվիրատուի կողմից <u>25.10.2021թ.</u> տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:***

Այսպիսով՝ Պայմանագրերի 7-րդ կետի 7.11-րդ ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***<u>Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***<u>Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:</u>*** Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ելնելով վերոգրյալից՝ արձանագրում եմ, որ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 26.10.2021թ.-ից: Սակայն, Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ 23/07-23/25579 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 20.10.2021թ., վերջինս էլ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած չլինելու պայմաններում:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել, տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը

կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետը հոսելու սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.10.2021թ. թիվ 26/26-1/17751-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**